

Ջ. ԼԵՈՊԱՐԴԻՆ՝ ՀԱՅ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆ

19-րդ դարի սկզբում Սուրբ Ղազարի գրադարանում պահվող հին հայերեն թարգմանություններով միաժամանակ հետաքրքրվել են երեք մեծ եվրոպացի գրող՝ Լոդովիկո դի Բրեմեն, Ջորջ Գորդոն Բայրոնը և Ջակոմո Լեոպարդին:

1816թ. Միլանում ստեղծվեց տարբեր ազգերի մտավորականների մի խումբ, որոնց միավորել էր արևելյան մշակույթով տարվածությունը: Ղրանց թվում էր գերմանացի Ա. Վ. Շլեգելը, անգլիացի Ջ. Գ. Բայրոնը, իտալացի Լ. դի Բրեմեն, որոնց ընկերական հանդիպումների մասին նամակագրությունների մեջ պահպանվել են հետաքրքրական փաստեր¹:

Եթե Բայրոնի հետաքրքրությունը հայկական մշակույթի և լեզվի հանդեպ առաջացել էր Լ. դի Բրեմենի հետ մտերմությունից և ազդեցությունից և, հետագայում խորացել մխիթարյան հայրերի հետ ծանոթությունից, ապա Լեոպարդին հայերեն լեզվի ուսումնասիրությանը հասավ իր ուրույն ճանապարհով, առանց որևէ մեկի միջամտության: Հայրենի Ռեկանատիում, հետագայում Հռոմում կատարած հին հունական հեղինակների իր ուսումնասիրությունների ընթացքում նա, ինչպես և մյուս հունագետները, անխուսափելիորեն պիտի բախվեր այն իրողությանը, որ հայտնի հունական շատ բնօրինակներ կորցված են և պահպանվել են միայն հայ թարգմանություններում:

Հայ հին թարգմանիչների, մասնավորապես մխիթարյան հայրերի, դերը անտիկ մշակույթի գանձերի պահպանման հարցում դժվար է գերազնահատել: Հիշենք որ, նախամաշտոցյան դարաշրջանում Հունաստանը հայ մտածողների համար եղել է գրավոր գիտության ամհատնում աղբյուր: Հայտնի է, որ դեռ Տիգրան Մեծի ժամանակ (94-54 թթ.) հույն պոետները և դերասանները ելույթ էին ունենում Տիգրանակերտում, հունական դպրոցի կանոններով էին ուսանում մեծատոհմիկ հայ երիտասարդները, այդ թվում մեծն արքայի որդի Արտավազդ Բ-ն, որը այնպես էր տիրապետում հունարենին, որ ստեղծագործում էր այդ լեզվով:

¹ Շլեգելը սովորություն ուներ արևելյան գրքեր թողնել սեղաններին, և երբ մի անտեղյակ այցելու սկսում էր դրանք թերթել, նա հապճեպորեն մոտենում էր՝ ասելով որ մի՞թե նա չգիտի, որ արևելյան գրքերը վերջից են սկսում կարդալ: Մեկ անգամ դի Բրեմեն հայերեն մի գիրք է բերում, և երբ Շլեգելն իր ավանդական նկատողությունն է անում, դի Բրեմեն բացում է վերջին էջն ու ասում. «Տարօրինակ է, որ այս մեկը սկսվում է «Վերջ» բառով»: Bolognesi G., Leopardi e l'armeno, Milano, 1998, p. 120

Եթե հայերը հնում գործերի ու սլավոնների նման հունարենից թարգմանում էին հատկապես սուրբ գրքերն ու եկեղեցու հայրերի աշխատությունները, ապա շուտով նրանց հետաքրքրությունը տարածվեց նաև հունական աշխարհիկ գրականության վրա, որն ըստ Մովսես Խորենացու «գիտությունների մայրն ու ստնտուն» էր:

Ի տարբերություն դի Բրենեի և Բայրոնի, Լեոպարդին բոլորովին չէր տիրապետում հայերենին, այդ իմաստով առավել հետաքրքիր է նրա ուշադրությունը հայերեն տեքստերի հանդեպ: Լեոպարդին դեռ քսան տարեկան հասակում տպագրել է Ցիցեռոնի «De Repubblica» տրակտատին նվիրված «Nota» արժեքավոր աշխատություն, բայց նրա առաջնային հետաքրքրությունը հին հույն հեղինակներ՝ Եվսեբիոսի² և Փիլոնի³ նկատմամբ, որոնց աշխատությունների մի մասը կորցված էր: Այսպիսով նա ձեռնամուխ եղավ դժվարին գիտական գործի՝ հիմնվելով պահպանված հայերեն և լատիներեն թարգմանությունների վրա՝ վերականգնել հունարեն բնօրինակները:

Իտալացի մեծ գիտնական Ջանկառլո Բոլոնեզի⁴ մանրակրկիտ ուսումնասիրել է Ջ. Լեոպարդիի աշխատությունները, վերլուծելով երեք (հունարեն, լատիներեն և հայերեն) լեզուներով կատարված համեմատությունները, եկել է այն եզրակացության, որ չտիրապետելով հայերենին, Լեոպարդին հաճախ շատ ճշգրիտ դիտողություններ է արել հռոմեացի և հայ թարգմանիչների սխալների մասին: Բնականաբար Լեոպարդիի եզրակացությունները նույնպես թերություններ ունեն, դրանցից հիմնականն այն է, որ իր ժամանակակից հայ հրատարակչի սխալները նա վերագրել է հայ հին թարգմանիչին⁵:

Օրինակ՝ Փիլոնի հայ թարգմանության հատվածներից մեկում Լեոպարդին նշում է մի անճշտություն, նա մեղադրում է հայ թարգմանիչին ձախճած բառի սխալ մեկնաբանման համար. »L'armeno scrive *facile per libenter*«⁶: Իսկապես, լատինական *facile* բառը կարող է որոշ դեպքերում *libenter* բառի հոմանիշը դառնալ, և այս դեպքում հայերեն «խնդությամբ» բառը, որը

² Եվսեբիոս Կեսարացի (մոտ 260 - 338), հռոմեացի եկեղեցական գրող, Կեսարիայի եպիսկոպոս: «Եկեղեցու պատմություն», «Կոնստանտին կայսեր վարքագրությունը» ստեղծագործությունների հեղինակը:

³ Փիլոն Ալեքսանդրիացի (մոտ. մ.թ.ա 25 - 50 մ.թ.), հրեական-հելլենիստական կղերական փիլիսոփա: Մշակել է Աստվածաշնչի մեկնաբանման այլաբանական մեթոդը:

⁴ ԴՅ ԳԱ անդամ, Լոմբարդիայի գիտության և Գրականության Ակադեմիայի Ինստիտուտի նախագահ, լեզվաբան, հայագետ:

⁵ Խոսքը գնում է Վենետիկում 1922թ. լույս տեսած Գայո Յ. Բ. Սուչերի «Philonis Judaei Sermones tres hactenus inediti. I. et II. De Providentia et III. De Animalibus, ex Armena versione antiquissima ab ipso originali textu Graeco ad verbum stricte exequuta, nunc primum in Latium fideliter translati per P. Jo. Baptistam Aucher Ancyrantum» հրատարակության մասին:

⁶ Leopardi G., Scritti filologici, (1817-1832) a cura di G. Pacella, Florence, 1969, p. 164

հրատարակիչ Աուչերը թարգմանել է *facile*, լիովին համապատասխանում է ձևսեռ հունարեն բառին:

Լեոպարդիի սխալը բացատրվում է նրանով, որ նա, հիմնվելով հրատարակիչ Աուչերի մեջբերված Նոր Կտակարանի լատիներեն (*et cum venissemus Hierosolymam libenter exceperunt nos fratres*) հատվածի վրա, գտնում է, որ հայ հին թարգմանիչը սխալ է թարգմանել ձևսեռ բառը: Սակայն, Նոր Կտակարանի հայերեն թարգմանության մեջ, որը հայտնի է իր ճշգրտությամբ, «*և ի մտանելն մեր ի երուսաղեմ խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք*» (Գործք ԻԱ. 1) հատվածում «խնդութեամբ» բառը լիովին համապատասխանում է հունական բնագրի ձևսեռ բառին: Ինչպես տեսնում ենք, անճշտության պատասխանատվությունը կրում է հրատարակիչ Աուչերինն է, այլ ոչ հայ հին թարգմանիչը:

Սեկ այլ հատվածում, Լեոպարդին, կատարելով հունարենից լատիներեն իր թարգմանությունը, նշում է, որ ձողյոս և էրիոյոս հունարեն բառերի հայերեն «աննշան» և «նշանավոր» ածականները չեն համապատասխանում բնագրին, քանի որ դրանց լատինական հոմանիշներն են *non signatum* և *signatum* բառերը: Չիմանալով հայերեն լեզուն՝ Լեոպարդին հիմնվել էր Աուչերի հայերենից լատիներեն կատարված թարգմանության վրա, որում այդ բառերը իրոք սխալ են թարգմանված, այն է՝ *tam ignobilium quam nobilium*: Ակհայտ է, որ հայ հին տեքստում գրված «աննշան» և «նշանավոր» բառերը ճշգրիտ են արտահայտում բնագրի իմաստը:

Բարտոլոմեո Բորգեզիին ուղղված մամակում Լեոպարդին գրել է. «Հայերենում բազմաթիվ սխալներ են գտել, այն սխալներից, որ շատերը վերագրում են թարգմանվող ձեռագրերին կամ թե՛ կարդալու, թե՛ թարգմանելու ընթացքում թարգմանչի կողմից թույլ տրված սխալներին, կամ էլ հայկական ձեռագրերի անճշտություններին, այդուհանդերձ դրանցից ոչ թե շատերը, այլ կարծում են՝ դրանց մեծ մասը բացահայտորեն չեն բխում տեքստի անկատարությունից»⁷:

Վերլուծելով Լեոպարդիի աշխատությունը՝ Բոլոնեզիին հաջողվում է ապացուցել, որ հիմնականում հայ թարգմանիչների տեքստն ավելի մոտ է բնագրին, քան լատինականը: Այսպես, Եվսեբիոսի «*Praeparatio Evangelica*» գործում մեջբերված Փիլոնի «*De Providencia*» աշխատության հատվածում, հակառակվելով Լեոպարդիի կարծիքին, նա ապացուցում է, որ հունարեն լոգոսմոս բառի հայկական «խորհուրդ» բառն ավելի ճիշտ է վերարտադրում բնագրի իմաստը, քան լատիներեն *conclave* բառը:

⁷ Բոլոնեզի Զ., Լեոպարդին և հայերենը, «Հայ-իտալական քարեկանության օրեր», 2005, էջ. 109:

Ավելացնենք նաև, որ շատ դեպքերում, օգտվելով հայերեն տեքստերին կցված լատիներեն տարբերակներից, Լեոպարդին հաջողվել է վերականգնել կորցված հունարեն տեքստը հենց հայկական թարգմանությունների շնորհիվ, այս դեպքում նույնպես բացահայտելով լատինական թարգմանության թերացումները:

Ինչպես նշում է Ջ. Բոլոնեզին, Լեոպարդիի բացահայտումներից կարևորագույնն այն է, որ հունական տեքստի հայերեն թարգմանությունը նպաստեց երկու լեզուների հարստացմանը. ոչ միայն հունական տեքստը շահեց հայ թարգմանությունից, այլ նաև հայերենն իր հերթին հարստացավ հունական տեքստի շնորհիվ: Ավելին՝ ըստ Լեոպարդիի. «Ինչպես հունարեն պատառիկներն են օգտակար ուղղելու համար թարգմանության համապատասխան այն մասերը, այնպես էլ թարգմանությունն է օգնում ուղղելու հույն գրիչների կատարած սխալները»⁸:

Լեոպարդիի նախաձեռնությունը, փաստորեն, առաջին փորձը հանդիսացավ հայկական և լատինական թարգմանությունների հիման վրա վերականգնել հունական կորցված բնօրինակները: Այդ նախաձեռնությունն իր հետևորդներն ունեցավ ի դեմս Միլանի կաթոլիկ համալսարանի մասնագետ Ջանկառլո Բոլոնեզիի, որը Լեոպարդիի ստեղծած սկզբունքով հայերեն թարգմանություններն օգտագործել է Թեոն Ալեքսանդրացու «Progymnasmata»:

Դժվար է գերազնահատել Ջ. Բոլոնեզիի կատարած նուրբ և անաչառ աշխատանքը, որի շնորհիվ նոր էջ է բացվում հայ թարգմանչական արվեստի պատմության ուսումնասիրության մեջ: «...ուսումնասիրություններուս հիմնականում ուղղված էին հետազոտելու եզակի երևույթները միլեզվի, որում ամենաարմատական բարեփոխումները զուգորդվում են ամենավաճառական երևույթների հետ, որոնք նաև վերջերս չափազանց կարևոր նշանակություն ունեցան հնդեվրոպական ընտանիքի բաղաձայնային սկզբնաձևերը վերականգնելիս, մի լեզու, որը, բացի դրանից, իր աշխարհագրական դիրքի և իր նախապատմական և պատմական ընթացքի շնորհիվ ներկայանում է իբրև առաձնաշնորհյալ դիտակետ լեզվաբանական համդրության գործընթացների ուսումնասիրության համար...»⁹: Այն փաստը, որ իտալացի հայագետն իր ուսումնասիրությունների ընթացքում հանդիպեց իր համճարեղ հայրենակցի անվանը, իր իսկ խոստովանությամբ իրեն զարմանք պատճառեց, և իր հետագա ուսումնասիրություններն արդեն այս ուղղությամբ մեծապես նպաստեցին ժամանակակից լեոպարդիագիտությանը:

⁸ Նույն տեղում, էջ. 110

⁹ Նույն տեղում, էջ. 107